ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(իրականացված հարցման կարգով)

Քաղ. Երևան 22 հունիսի 2020թ.

2020թ-ի հունիսի 16-22-ը տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Տեխնիկական տնօրենի պ/կ.
Ա. Ղոսալմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի էլ. Արտադրամասի պետ.
Ս. Ավագյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի էլ. Արտադրամասի պետի տեղակալ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Մադոյանը, իսկ քարտուղարն էր՝ Արմինե Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Դ. Մադոյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի գինը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1.	**Հին կայանի թիվ 1, 2, 3 մասնաշենքերում և պահակային ծառայության շենքում հակահրդեհային ազդանշանման համակարգի մոնտաժման աշխատանքներ**	4 156 700

ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ	Ք. Երևան, Ահարոնյան 2	info@sossistems.am
2	Դեվելոփ Քոնսթրաքշն ՍՊԸ	Ք. Երևան, Ազատության պող., 27 շ.	developconstructionllc@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտերը կազմվել և ներկայացվել են **ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-20/57** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում բացակայում է ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ, որով ընկերության տնօրենը լիազորում է Անի Նահապետյանին, որպեսզի վերջինս իր փոխարեն էլեկտրոնային հաստատի հայտի փաստաթղթերը.
- Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակցի զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «Х»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	1	Х	ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ	3087400	3704880
	2		Դեվելոփ քոնսթրաքշն ՍՊԸ	3225000	3870000

Որոշվեց՝

1. Դ. Մադոյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Դեվելոփ քոնսթրաքշն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:
4. Արմինե Ավետիսյանին՝ ծանուցել ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Որոշվեց՝
1. ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Մադոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ղոսալմյան _____

Ս. Ավագյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Վարդապետյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Ավետիսյան _____